



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511703, 511704

ՎԴ - Ն-6814

«30» օգոստոսի 2018թ.

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Հարգելի՛ գործընկերներ,

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) ձևավորում է Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով, Ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով և իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար՝ աշխատանքային խմբեր:

Հարկ է նկատել, որ սույն թվականի հուլիսի 27-ին տեղի ունեցած Ընդհանուր ժողովում կայացվեց որոշում՝ ձևավորել աշխատանքային խումբ՝ դատարանների գործունեության բարելավման նպատակով՝ դատական իշխանության հեղինակության և անկախության ամրապնդմանն առնչվող հարցերի և առաջարկությունների քննարկման արդյունքում համապատասխան մարմիններին առաջարկներ ներկայացնելու համար:

Վերը նշվածի կապակցությամբ խնդրում եմ, մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ը կոլեկտիվի կողմից ցանկություն արտահայտելու դեպքում, ներկայացնել Ձեր դատարանից մեկ դատավորի թեկնածություն (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից մինչև 5 դատավորի թեկնածություն, իսկ Վճռաբեկ դատարանից՝ յուրաքանչյուր պալատից 1 դատավորի թեկնածություն)՝ վերոնշյալ աշխատանքային խմբում ընդգրկելու նպատակով:

Միաժամանակ ցանկանում եմ նշել, որ սույն գրության կազմման օրվա դրությամբ Ընդհանուր ժողովի 27.07.2018թ. որոշման կատարման ուղղությամբ արձագանք ստացվել է միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռ.Վարդազարյանի և ՀՀ վարչական դատարանի նախագահ Ա.Դարբինյանի գրություններով:

Պաշտոնակատար՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ